

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում (այսուհետ՝ հանրային ծառայությունների ոլորտ) հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների (այսուհետ՝ կարգավորման պարտադիր վճարներ) հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է կարգավորման պարտադիր վճարների հասկացությունը, կարգավորման պարտադիր վճարներ վճարողների շրջանակը, վճարման կարգը, ինչպես նաև սույն օրենքի խախտման համար պատասխանատվությունը:

Հոդված 2. Կարգավորման պարտադիր վճարների հասկացությունը

Կարգավորման պարտադիր վճարները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե վճարվող պարտադիր վճարներ են:

Գ Լ ՈՒ Խ 2

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 3. Կարգավորման պարտադիր վճարներ վճարողները

Կարգավորման պարտադիր վճարներ վճարողներ (այսուհետ՝ վճարողներ) են համարվում հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող և ծառայություն մատուցող անձինք, որոնց համար հանձնաժողովը սահմանում է կարգավորվող սակագներ:

Հոդված 4. Վճարողների հաշվառման կարգը

Հանձնաժողովը սահմանում է վճարողների հաշվառման կարգը, հաստատում է վճարողների անվանական կազմը յուրաքանչյուր տարվա համար և իրականացնում է վճարողների հաշվառումը:

Հոդված 5. Վճարողների իրավունքները

Վճարողներն իրավունքն ունեն՝

ա) օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու կարգավորման պարտադիր վճարի վճարման կարգի նկատմամբ հսկողություն իրականացնող իրենց հաշվառման վայրի հարկային մարմնի (այսուհետ՝ հարկային մարմին) և հանձնաժողովի գործողությունները:

բ) կարգավորման պարտադիր վճարի վճարման մասին հարկային մարմնից ստանալու տեղեկանք:

գ) սույն օրենքով սահմանված դեպքերում պահանջելու և ստանալու վերադարձման ենթակա կարգավորման պարտադիր վճարի գումարը:

Հոդված 6. Վճարողների պարտականությունները

Վճարողները պարտավոր են՝

ա) ժամանակին և լրիվ վճարել սույն օրենքով սահմանված կարգավորման պարտադիր վճարը:

բ) սույն օրենքով սահմանված դեպքերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե վճարել հաշվարկված տույժերի և տուգանքների գումարները:

Հոդված 7. Կարգավորման պարտադիր վճարների վճարման պարտավորության դադարումը

Վճարողների կարգավորման պարտադիր վճարների վճարման պարտավորությունը դադարում է այդ պարտականության կատարումով, օրենքով կարգավորման պարտադիր վճարի վճարումից ազատումով, լիցենզիայի կամ թույլտվության գործողության դադարումով կամ օրենքով սահմանված այլ հիմքերով:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՂԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳ

Հոդված 8. Կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի հաշվարկման և հաստատման կարգը

1. Կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի հաշվարկման համար հիմք է ընդունվում հանձնաժողովի յուրաքանչյուր տարվա համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված պահպանման ծախսերի մեծությունը^{*)} (ՀՊԾ):

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված կարգով հաշվարկված ծախսերի իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով հանձնաժողովը հաշվարկում է՝

ա) վճարողների ընդհանուր իրացման շրջանառությունը (ԻՇ-ը)՝ հաշվի առնելով սույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սահմանված կարգով հաշվառման վերցված յուրաքանչյուր վճարողի (Վ₁, Վ₂, Վ₃... ...Վ_n) համար սակագնի կամ ծառայությունների վճարի հաշվարկում կանխատեսված իրացման շրջանառությունները (ԻՇ₁, ԻՇ₂, ԻՇ₃... ... ԻՇ_n)՝ առանց ավելացված արժեքի հարկի գումարների:

բ) ընդհանուր իրացման շրջանառության մեջ յուրաքանչյուր վճարողի իրացման շրջանառության տեսակարար կշիռը (ՏԿ₁, ՏԿ₂, ՏԿ₃... ...ՏԿ_n):

գ) յուրաքանչյուր վճարողի կարգավորման պարտադիր վճարի տարեկան դրույքաչափը (Դ₁, Դ₂, Դ₃... ...Դ_n)՝ որպես յուրաքանչյուր վճարողի իրացման շրջանառության տեսակարար կշռի և հանձնաժողովի յուրաքանչյուր տարվա պահպանման ծախսերի մեծության (ՀՊԾ) արտադրյալ, որը ներառվում է յուրաքանչյուր վճարողի սակագնում կամ ծառայությունների մատուցման վճարի մեջ (մինչև ավելացված արժեքի հարկի կիրառումը):

3. Սույն հոդվածի երկրորդ մասում նշված հաշվարկների սխեման ներկայացվում է սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածում:

4. Սույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ հանձնաժողովի կողմից կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը հաշվարկվում և համապատասխան որոշմամբ հաստատվում են յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի համար սահմանված կարգով և ժամկետներում՝ հանձնաժողովի պահպանման ծախսերի նախահաշվի հաշվարկման և ներկայացման հետ միաժամանակ:

Հոդված 9. Սույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովի կողմից իրականացվող հաշվարկները ներկայացվում են յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի համար սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովի պահպանման ծախսերի նախահաշվի հետ միասին:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ, ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳ

Հոդված 10. Հաշվետվությունների ներկայացման կարգը և ժամկետները

1. Վճարողները մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ կարգավորման պարտադիր վճարների հաշվետվությունները ներկայացնում են հարկային մարմին:

Կարգավորման պարտադիր վճարի հաշվետվության ձևը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը՝ համաձայնեցնելով հանձնաժողովի հետ:

2. Նախորդ ժամանակաշրջանների համար ներկայացված կարգավորման պարտադիր վճարի հաշվետվություններում վճարողների կողմից սխալներն ինքնուրույն հայտնաբերվելու դեպքում վճարողները կարող են հարկային մարմին ներկայացնել ճշգրտված հաշվետվություններ, որոնց հիման վրա հարկային մարմինը կատարում է այդ ժամանակաշրջանների համար պարտավորությունների վերահաշվարկ:

3. Հարկային մարմինների կողմից վճարողների մոտ իրականացվող ստուգումների ընթացքում կամ ստուգումների ավարտից հետո վճարողների կողմից սույն օրենքով սահմանված կարգով հարկային մարմիններ ներկայացված ստուգվող կամ արդեն ստուգված ժամանակաշրջանին վերաբերող հաշվարկների ճշտում չի իրականացվում:

Հոդված 11. Կարգավորման պարտադիր վճարների վճարման կարգը և ժամկետները

1. Վճարողները սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված և հաստատված կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի մեկ քառորդի չափով վճարները վճարում են յուրաքանչյուր եռամսյակի առաջին ամսվա 30-ից (իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից) ոչ ուշ:

2. Հանրային ծառայությունների ոլորտում մեկից ավելի կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց կողմից վճարման ենթակա կարգավորման պարտադիր վճարները սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկվում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե են վճարվում յուրաքանչյուր գործունեության համար առանձին:

3. Կարգավորման պարտադիր վճարը վճարվում է Հայաստանի Հանրապետության արժույթով:

Հոդված 12. Կարգավորման պարտադիր վճարները վերադարձնելու կարգը

Սույն օրենքով սահմանված կարգով սահմանված կարգավորման պարտադիր վճարի գումարից ավելի վճարված գումարները, վճարողի դիմումի համաձայն, հարկային մարմնի կողմից հաշվանցվում են վճարողի կարգավորման պարտադիր վճարների առաջիկա վճարումների հաշվին կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի սահմանած կարգով վերադարձվում են դիմումն ստանալու օրվանից հետո՝ 30-օրյա ժամկետում:

Գ Լ ՈՒ Խ 5

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 13. Տեղեկատվությունների տրամադրման կարգը

1. Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառված վճարողների կազմի և վճարողների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույթաչափերի (ինչպես նաև վճարողների եռամսյակային վճարների չափի) վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն:

2. Սույն հոդվածի առաջին մասի համաձայն՝ ստացված տեղեկատվությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը երկօրյա ժամկետում տրամադրում է վճարողների հաշվառման վայրի համապատասխան հարկային մարմնին:

Գ Լ ՈՒ Խ 6

ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 14. Սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Կարգավորման պարտադիր վճարը ժամանակին վճարելու և սույն օրենքի մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում կրում են վճարողները և դրանց՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք:

3. Կարգավորման պարտադիր վճարի վճարումները սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված վճարի գումարի 0.075^{2), 3)} տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

4. Վճարողի կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունը սույն օրենքով սահմանված ժամկետից երկու ամսից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար վճարողից գանձվում է տուգանք՝ դրա հետևանքով չմուծված կարգավորման պարտադիր վճարի ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան այդ վճարի ընդհանուր գումարն է:

5. Սույն օրենքով սահմանված հաշվետվությունները չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով այն վարելու համար վճարողներից գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե չմուծված կամ պակաս մուծված կարգավորման պարտադիր վճարի գումարի 10 տոկոսի չափով:

6. Վճարողները պակաս ցույց տրված կարգավորման պարտադիր վճարի գումարը, ինչպես նաև սույն հոդվածի երրորդ-հինգերորդ մասերի համաձայն՝ հաշվարկված տույժերը և տուգանքները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե են վճարում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

7. Օրենքով սահմանված կարգով չվճարված կարգավորման պարտադիր վճարի գումարի վճարումն ապահովվում է դատական կարգով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության ներկայացրած հայցի հիման վրա:

Գ Լ ՈՒ Խ 7

ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Հոդված 15. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից:

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

30 դեկտեմբերի 2007թ.
ք. Ստեփանակերտ
ՀՕ-125

Ս Խ Ե Մ Ա

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶՎԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

Հաշվառման վերցված վճարողները	Յուրաքանչյուր վճարողի համար տվյալ տարվա սակագնի կամ ծառայությունների վճարի հաշվարկում կանխատեսված արտադրանքի կամ ծառայությունների իրացման շրջանառությունները (առանց ԱԱՀ-ի)	Տեսակարար կշիռը	Յուրաքանչյուր ընկերության կարգավորման պարտադիր վճարի տարեկան դրույքաչափը
Վ ₁	հՇ ₁	հՇ ₁ / հՇ _ը = ՏՎ ₁	ՏՎ ₁ x ՀՊԾ = Ղ ₁
Վ ₂	հՇ ₂	հՇ ₂ / հՇ _ը = ՏՎ ₂	ՏՎ ₂ x ՀՊԾ = Ղ ₂
Վ ₃	հՇ ₃	հՇ ₃ / հՇ _ը = ՏՎ ₃	ՏՎ ₃ x ՀՊԾ = Ղ ₃
.....
Վ _n	հՇ _n	հՇ _n / հՇ _ը = ՏՎ _n	ՏՎ _n x ՀՊԾ = Ղ _n
Ընդամենը	հՇ _ը	1	ՀՊԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը ^{*2)}

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 2-րդ հոդվածը, որը վերաբերում է «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:
2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վճարման ժամկետին հաջորդող 365 օրը չլրացած կարգավորման պարտադիր վճարի չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից շարունակվում է ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,1 տոկոսի չափով մինչև վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրանալը:

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը ^{*3)}

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 2-րդ հոդվածը, որը վերաբերում է «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:
2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վճարման ժամկետին հաջորդող 365 օրը չլրացած կարգավորման պարտադիր վճարի չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից շարունակվում է ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,075 տոկոսի չափով մինչև վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրանալը:

**1) «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (23.12.10 ՀՕ-79-Ն) խմբագրությամբ:
 *2) «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (23.12.15 ՀՕ-70-Ն) խմբագրությամբ:
 3) «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ օրենքի (21.12.17 ՀՕ-66-Ն) խմբագրությամբ: